

բանից. Եւ այնպէս չուր խօսքերէն համոզուեցան վրաց իշխանք, որ երդմամբ ուխտ եւ դաշինք դրին փոփոխակի օգնութեան հասնիլ, յարձակումը ուստից գայր, եւ ժամադրեալ տեղին գտնուիլ իւրաքանչիւրն իրեն զօրքով եւ կարողութեամբ:

Այսպէս Վրաց այդ դաշանց միաբանելէն վերջ, առանց ձմեռուան ցուրտին ուշ դնելու կ'անցներ Թեոդորոս Սիւնեաց երկիրը եւ հոն դարձեալ Սիւնեաց եւ Աղուանից նախարարքը ժողուելով, նոյն միաբանութեան դաշինքը կը հաստատէր, գրով եւ երդմամբ ամենքը կ'ապահովէր, եւ կ'ուզար Վասպուրական իւր համազգի եւ համակամ Արծրունեաց Նահապետին ցոյց կ'ուտար մինչեւ այնօր ինչչափ կրցեր էր յաջողիլ, եւ այնպէս կը դառնար իր Ռշտունեաց Ոստանը հանգչելու պատերազմի եւ տաժանելի ուղեգնացութեանց յոգնութենէն: Իւր հանգիստը նաեւ անխոնջ գործունեութիւն մ'էր, բերդերը կ'ամրացներ, Աղթամարայ կղզուոյն ջրային պարիսպը բաւական չի համարելով աշտարակաց ամրութեամբ անառիկ կ'ըներ, գիւղացուոց ապահովութեան համար ի բնէ ամուր տեղուանք հողապատնէներով կը զօրացներ եւ համբարանոցներ կը շինէր. եւ ամէն տեղ անձամբ կը շրջէր աջօք տեսնելու համար թէ իր հրամանները լաւ կը կատարուէի՞ն: Ոստանի մէջ զենքեր, զրահներ կը շինուէին, Բզնունեաց ծովուն վրայ նաւերու թիւը կ'աւելնար, եւ Ռշտունեաց երկրին երիտասարդք ամենքը զինավարժութեան կը զբաղէին ազատք եւ անազատք:

Ռշտունեաց Տիկինն Սեթայ, իշխանին առաջին օգնականն էր այս աշխատութեանց մէջ, շատ անգամ կը տեսնուէր, որ երկանն սկսածը ինք վերակացութիւն կ'ըներ ի գլուխ հանելու համար: Վասնզի Թեոդորոս մեծ մասը ժամանակին երկրէն դուրս անցնելու պարտաւորեալ՝ միշտ կնոջը կը յանձնէր երկրին կառավարութիւնը: Իսկ զինուորական կառավարութեան գործերը կը կատարէր Ատոմ Շահունի՝ ծեր զօրավարը, որուն բնաւորութեան խստութեանը մանաւանդ թէ դաժանութեան փորձն առինք նախընթաց գլխոյ մը մէջ: Բայց առանց պատճառի չէր բոլորովին այս դաժանութիւնը, բախտին զանազան եւ բազմադիմի հարուածներ զինք դառնացուցեր էին, ուստի ոչ մէկ տեղ իւր ժպիտը չէր տեսնուէր, եթէ ոչ Ռշտունեաց Ոստանը, եւ այն շնորհքը միմիայն անձի մը համար պահուած էր եւ այն՝ տասներկու-տասներեք տարեկան Ռշտունեաց Օրիորդն էր: Թեոդորոս իսքը նաեւ, որու վրայ միայն Ատոմ համարմունք եւ յարգանք կը ցցներ՝ կարճ եւ համառօտ պատասխան կ'ընդունէր: Իր սպասաւորքը շատ անգամ վարժած էին իմանալ նորա կամքը ակնարկութենէ մը եւ պէտք է նաեւ արդար լինելու համար ըսել թէ ամենակարեւորն միայն կը պահանջէր եւ եթէ ծառայքը դանդաղէին ինք